# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 19 - 20 (16618) ՇԱԲԱԹ, 10 ՄԱՐՏԻ 2018 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵՏՐԻ


ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

## ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ




*Մարտի 5-ին, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին եւ խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն խորհրդարանին ներկայացրին տեղական ինքնակառավարման եւ ապակենտրոնացման հիմնադրույթի ազգային մոտեցման ռազմավարությունը:*

Թբիլիսիի խորհրդարանի շենքում անցկացված նոր ռազմավարության շնորհանդեսին ներկա էին Վրաստանի կառավարության, խորհրդարանի, քաղաքացիական հասարակության, դիվանագիտա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎԻԶԱ

## ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է ԱՆԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻ ՀԱՐՑՈՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԸ

*Վրաստանի իշխանությունները հայտարարել են Եվրամիության հետ անայցեգրային պայմանակարգի պայմանների եւ այդ պայմանների խախտման հետեւանքների մասին բնակչությանը տեղեկատվության հանձնման քարոզարշավի «Երրորդ ալիքի» մեկնարկը:*



Այդ քարոզարշավի շրջանակներում՝ առաջին հանդիպումներն անցկացրեցին Իմերեթիի տարածաշրջանում: Քարոզարշավին մասնակցում են Վրաստանի ԱԳ նախարարության ներկայացուցիչներն ու փորձագետները:

Տեղեկատվական քարոզարշավի «Երրորդ ալիքը» ներառում է շուրջ 100 միջոցառում: Ծրագրվում է հանդիպումների անցկացում Վրաստանի գրեթե 50 բնակավայրերում: Զուգահեռաբար, կառավարությու-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ԿՐՈՆԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ 2016-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

### ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ ՆԵՐԿԱ ԷՐ ԵՎ ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ




*Մարտի 7-ին, Թբիլիսիում, «Քորթիարդ Մերիոտ» հյուրանոցում անցկացվեց կրոնի հարցերով պետական գործակալության 2016-2017 թվականների հաշվետվության շնորհանդեսը: Շնորհանդեսին ներկա էին Վրաստանում գործող կրոնական կազմակերպությունների, երկրի գործադիր եւ օրենսդիր մարմինների, միջազգային կազմակերպությունների եւ Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչները:*

Գործակալության գործունեության հաշվետվությամբ ելույթ ունեցավ կրոնի հարցերով պետական գործակալության նախագահի Զազա Վաշաղմաձեն: Իր խոսքում, նա ուշադրությունը բեւեռեց երկրում կրոնի ազատության տեսանկյունից առկա իրավիճակի, առանձնապես բռնազավթված տարածքներում ստեղծված իրավիճակի վրա, որտեղ մշտա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

## ՌՈՒՍԼԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ՝ ՍՈՒՄԳԱՅԻԹՅԱՆ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ



Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Ռուսլան Պողոսյանը («Վրացական երազանք» կուսակցություն), Սումգայիթյան ոճրագործության 30-րդ տարելիցի կապակցությամբ, մարտի 7-ին, Քութաիսիում, խորհրդարանի լագումար նիստում հանդես եկավ դատապարտող հայտարարությամբ.

«Խորհրդային միության փլուզումը մի շարք ողբերգական իրադարձություններով է ուղեկցվել: Արյունալի էթնիկ կոնֆլիկտներ են եղել, զոհվել են բազմաթիվ մարդիկ: Այս տարի լրանում է Սումգայիթում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների 30-րդ տարելիցը: Խորհրդային միության փլուզման ժամանակ սա խաղաղ բնակչության առաջին զանգվածային արյունահեղությունն էր: Սումգայիթի ողբերգության պատմությունը առաջին հերթին լարել է հայ եւ ադրբեջանցի ժողովուրդների հարաբերությունները, որոնք, ցավոք, այսօր նույնպես հեռու են ցանկալի խաղաղությունից: Ցավով ցանկանում եմ հիշել այն խաղաղ բնակիչներին, ովքեր մահացել են ԽՍՀՄ փլատակներում եւ ցանկանում եմ, որ Սումգայիթի արյունահեղությունը որեւէ այլ վայրում երբեք չկրկնվի»:

ՎՐԱՍՏԱՆ - ՌՈՒՍԱՍՏԱՆ

## ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿՈՉ

*Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին կոչ է արել Ռուսաստանին՝ համատեղ քայլեր ձեռնարկել երկկողմ հարաբերությունների նորմալացման համար:*

«Ընթացիկ տարվա օգոստոսին կլրանա տասը տարին՝ 2018 թվականի պատերազմից հետո: Այդ դրամատիկ երեւույթը խորը հետք է թողել վրաց ժողովրդի կյանքում եւ վրաց-ռուսական հարաբերություններում:

Խզվել են դիվանագիտական կապերը: Մոսկվայի կողմից Աբխազիայի եւ Ցխինվալիի տարածաշրջանի անկախության ճանաչումը, փաստորեն, փակուղի մտցրեց բնականոն միջպետական հարաբերությունների հաստատման հեռանկարը»,- ասված է վարչապետի հայտարարության մեջ:

Գիորգի Կվիրիկաշվիլին նշել է, որ ներկայում հարկ է ընտրություն անել՝ այդ տարեթիվը դիմավորել փոխադարձ մեղադրանքներով ու խիստ հայտարարություններով կամ «կատարել խելամիտ, թեկուզեւ ոչ մեծ քայլեր՝ հարաբերությունները կախարդված շրջանից դուրս բերելու համար»:

«Մենք ավելի վաղ էլ հայտարարել ենք եւ վերահաստատում ենք, որ շահագրգռված ենք Ժնեւյան միջազգային քննարկումների գործընթացում իրական առաջընթացի հասնելու հարցում, այդ նպատակով ես հավաստել եմ դրանում անձամբ ներգրավվելու իմ պատրաստակամությունը: Մենք նաեւ պատրաստ ենք ուղղակի երկխոսություն վարել աբխազների ու օսերի հետ, եւ այդ տեսանկյունից դրական կլիներ իրական կառուցողական մոտեցումը Ռուսաստանի կողմից: Քաղաքական կամքի առկայության դեպքում կարելի է ձեռնարկել նաեւ այլ խելամիտ քայլեր»,- հայտարարել է Վրաստանի վարչապետը:

ՎՐԱՍՏԱՆ - ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

## ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ-ՎՐԱՍՏԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԹԵՎԱԿՈԽՈՒՄ Է ՈՐԱԿԱԿԱՆ ՆՈՐ ՓՈՒԼ»

*Մարտի 8-10-ին, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, աշխատանքային այցով, գտնվում էր Բրյուսելում:*



Այցի շրջանակներում՝ Վրաստանի ղեկավարը հանդիպումներ ունեցավ եվրահանձնաժողովի, Եվրամիության խորհրդի, ինչպես նաեւ՝ Հյուսիս-Ատլանտյան այլանսի կենտրոնակայանի բարձրաստիճան ղեկավարների հետ: Մասնավորապես, Գիորգի Մարգվելաշվի-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

## ԷԴՈՒԱՐԴ ՇԱՐՄԱԶԱՆՈՎ. «ՄԵՆՔ ԲԱՐՁՐ ԵՆՔ ԳՆԱՀԱՏՈՒՄ ՄԵՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ»

*Հայաստանի Հանրապետական կուսակցությունը գործադիր մարմնի նիստում ամփոփել է Վրաստանի վարչապետի՝ Հայաստան կատարած այցի արդյունքները:*



ՀՀԿ ԳՄ նիստից հետո լրագրողների հետ հանդիպմանն այս մասին ասաց ՀՀԿ խոսնակ, ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը: «Շատ կառուցողական ենք համարում Վրաստանի վարչապետի այցը Հայաստան, հանդիպումները հանրապետության նախագահի եւ վարչապետի հետ, լայն կազմով պատվիրակությունների հանդիպումները»,- նշեց Շարմազանովը:

Նա հավելեց, որ հայ-վրացական հարաբերություններում որոշակի դրական տեղաշարժ է սպասվում միջխորհրդարանական համագործակցության ուղղությամբ:

Էդուարդ Շարմազանովի խոսքով, Հայաստանի եւ Վրաստանի միջեւ չկան հարցեր, որոնք անհնար է լուծել բանակցություններով: «Մենք բարձր ենք գնահատում մեր համագործակցությունը Վրաստանի հետ: Այն մեր բարեկամ երկիրն է, եւ մենք պատրաստ ենք շարունակել այդ համագործակցությունը»,- եզրափակեց Շարմազանովը:

ՎՐԱՍՏԱՆ - ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

# ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ-ՎՐԱՍՏԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԹԵՎԱԿՈԽՈՒՄ Է ՈՐԱԿԱԿԱՆ ՆՈՐ ՓՈՒԼ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

լին հանդիպում ունեցավ եվրոպական խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկի, եվրահանձնաժողովի նախագահ Ժան Կլոդ Յունկերի, արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության հարցերով Եվրամիության գերագույն ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինիի, ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգի հետ: Այցի շրջանակներում՝ Վրաստանի նախագահն այցելեց Լուվենի կաթոլիկ համալսարան, ելույթ ունեցավ Բրյուսելի գագաթաժողովում:

Հանդիպումներում հիմնական ուշադրությունը բեւեռվեց եվրոպական եւ եվրատլանտյան կառույցներին Վրաստանի ինտեգրման, երկրում իրականացվող բարեփոխումների եւ հեռանկարների, եվրամիության հետ համագործակցության, անայցեգրային պայմանակարգի գործընթացի հարցերին: Հանդիպումներում Վրաստանի նախագահն առանձնակի անդրադարձավ երկրի անվտանգության, բռնազավթված տարածքներում ստեղծված իրավիճակի, Վրաստանի նկատմամբ Ռուսաստանի ագրեսիվ քաղաքականության հարցերին եւ եվրոպական եւ եվրատլանտյան գործընկերներին մանրամասն տեղեկատվություն հանձնեց բռնազավթված Ցխինվալիի տարածքում Վրաստանի քաղաքացի Արչիլ Տատունաշվիլու հափշտակման եւ ողբերգական մահվան վերաբերյալ:



«Հանդիպումները կրկին անգամ ցույց տվեցին, որ Վրաստան-Եվրամիություն» համագործակցությունը թեւակոխում է որակական նոր, առավել բարձր փուլ»,- հայտարարեց Վրաստանի նախագահը:



## ԳԵՐՄԱՆԻԱ
## ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՄԵԾ ԿՈԱԼԻՑԻԱ

*Սոցիալ-դեմոկրատներն Անգելա Մերկելի պահպանողական բլոկի հետ կմտնեն Գերմանիայի կառավարություն:*

*Բունդեսթագը, Գերմանիայի կանցլերի պաշտոնի համար Անգելա Մերկելի թեկնածության շուրջ, կքվեարկի մարտի 14-ին: Ինչպես սպասվում էր, Գերմանիայի նախագահ Ֆրանկ Վալտեր Շտայնմայերը պատգամավորներին առաջարկեց Մերկելի թեկնածությունը: Բունդեսթագում քվեարկությունը կլինի գաղտնի: ՔԴՄ/ՔՍՄ-ն եւ ԳՍԴԿ-ն խորհրդարանում ունեն 399 տեղ 709-ից, ուստի Մերկելի վերընտրության հետ կապված ոչ մի կարգի խնդիրներ չպետք է ծագեն:*

## ԻՏԱԼԻԱ
## ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՂԹԵԼ Է ԱՋ ԿԵՆՏՐՈՆԱՄԵՏ ԿՈԱԼԻՑԻԱՆ

*Մարտի 4-ին Իտալիայում անցկացված խորհրդարանական ընտրություններում հաղթողներ են դարձել աջ կենտրոնամետ կոալիցիան՝ Մատեո Սալվինիի «Լիգայի» գլխավորությամբ, եւ «5 աստղերի» շարժումը»:*

*Պաշտոնական արդյունքների համաձայն, աջ կենտրոնամետ կոալիցիան հավաքել է ձայների 37 տոկոսը, «5 աստղերի» շարժումը»՝ 32 տոկոսը: Աջ կենտրոնամետ կոալիցիայում, որի մեջ մտնում է Սիլվիո Բեռլուսկոնիի «Հառա՜ջ, Իտալիա»-ն, առաջատար կուսակցությունը դարձել է «Լիգա»-ն՝ ձայների գրեթե 18 տոկոսով:*

*Ձախ կենտրոնամետ Դեմոկրատական կուսակցությունը (ԴԿ) հավաքել է ձայների 19 տոկոսը, «Հառա՜ջ, Իտալիա»-ն ստացել է ձայների 14 տոկոսը:*

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

# ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կան կորպուսի եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները: Միջոցառմանը ելույթ ունեցան Թբիլիսիի քաղաքապետ, տեղական ինքնակառավարման ազգային ասոցիացիայի նախագահ Կախա Կալաձեն, Վրաստանում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ղեկավար Նիլս Սքոթը, Վրաստանում Ավստրիայի դեսպան Արադ Բենկոն, Վրաստանում Շվեյցարիայի դեսպան՝ Լուկաս Բեզլինգերը:

Ներկայացնելով նոր ռազմավարությունը, Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն նշեց, որ, ներկայացված փաստաթուղթը նախատեսում է, առաջիկա 7-8 տարիների ընթացքում, ինքնակառավարման մարմինների ֆինանսավորումն ավելացնել մի քանի անգամ, եւ այն հասցնել երկրի համախառն ներքին արտադրանքի (ՀՆԱ) 7 տոկոսին: Բացի այդ, Իրակլի Կոբախիձեի խոսքով, պետք է ընդլայնվեն տեղական ինքակառավարման լիազորությունները, իրականացվի ֆինանսական ապակենտրոնացումը, ինչպես նաեւ՝ մեծացվի ինքնակառավարման գործընթացում քաղաքացիների ներգրավվածության գործընթացը: Նա ընդգծեց նաեւ՝ այդ գործընթացում «Քաղաքական կամքի» կարեւորությունը եւ շնորհակալություն հայտնեց երկրի վարչապետին նրա համար, որ ներկայացված բարեփոումն առանձնակի աջակցության է արժանացել կառավարության կողմից:

Նոր ռազմավարության շնորհանդեսին, ներկայացնելով ապակենտրոնացման բարեփոխման գործում իշխանությունների միտումները, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հայտարարեց, որ ինքնակառավարման բարեփոխման գլխավոր նպատակը պետք է լինի այն, որ «տարածաշրջաններում գործի իշխանություն, որը կընդունի որոշումներ, նաեւ՝ համապատասխան ռեսուրսներ այդ որոշումների ընդունման եւ դրանց կատարման ապահովման համար»: Վարչապետի խոսքով, Վրաստանում տարածաշրջանների միջեւ կենսամակարդակի անհավասարությունը լուրջ մարտահրավեր է, այն պետք է վերացվի բարեփոխման արդյունքում: Կառավարության ղեկավարը համոզմունք հայտնեց նաեւ, որ բարեփոխման արդյունքում՝ «Երիտասարդները, ովքեր ունեն հիանալի կրթություն», կստանան ազդակ՝ տեղական ինքնակառավարմանը մասնակցելու համար, դրանով իսկ կնպաստեն տարածաշրջանային զարգացմանը:

Ավելացնենք, որ ինքնակառավարման նոր բարեփոխման իրականացման ծրագրերի մասին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հայտարարել էր 2017 թվականին, երբ խորհրդարանի հաստատմանն էր ներկայացրել կառավարության նոր կազմը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

# ԿՐՈՆԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ 2016-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

պես խախտվում է տեղի բնակիչների՝ վրացիների կրոնական իրավունքները:

Զազա Վաշաղմաձեն իր խոսքում մանրամասն կանգ առավ Վրաստանում գործող կրոնական կազմակերպություններին ցուցաբերվող օգնության, այդ կազմակերպությունների կողմից իրականացվող գործունեության վրա: Խոսելով Վրաստանում Հայ Առաքելական եկեղեցու մասին, գործակալության նախագահը նշեց, որ, ներկա դրությամբ, Վրաստանում գործում է 50 հայկական եկեղեցի եւ այդ եկեղեցիների մեծ մասը ներառված է մշակութային ժառանգության հուշարձանների ցուցակում, եւ դրանք գտնվում են պետության խնամքի ու հոգատարության ներքո: «Երկու տարի առաջ Թբիլիսիում տոնականորեն բացվեց վերանորոգված Սուրբ Գեւորգ Առաջնորդանիստ եկեղեցին, որի վերականգնման աշխատանքների մի մասը ֆինանսավորեց մեկենաս Բիձինա Իվանիշվիլին: 2016 թվականին ավարտվեցին Թբիլիսիում գտնվող Նորաշեն եկեղեցու ամրացման եւ վերանորոգման աշխատանքները, ինչի համար պետությունը ծախսեց շուրջ 1 միլիոն լարի: Ընթացքի մեջ են Մուղնեցոնց եկեղեցու ամրացման աշխատանքները: Մյուս եկեղեցիների կապակցությամբ աստիճանաբար իրականացվում է հարցի քննարկումը եւ, հետեւաբար, սահմանվում դրանց փոխանցման ընթացակարգերը»,- իր խոսքում նշեց Զազա Վաշաղմաձեն:

Հաշվետու զեկուցումից հետո շնորհանդեսին ելույթ ունեցան Վրաստանում գործող կրոնական կազմակերպությունների՝ Վրաց Առաքելական Ուղղափառ եկեղեցու, Վրաստանի մուսուլմանների վարչության, եզդիների հոգեւոր խորհրդի, Հայ Առաքելական Ուղղափառ եկեղեցու Վիրահայոց թեմի, վրաց Հրեաների միության, Լաթին կաթոլիկների կովկասյան առաքելական վարչության, վրաց ավետարանչական, լյութերական, ավետարանչական բողոքական, Վրաստանի Ավետարանչական հավատի, Ավետարանչական բաբտիստական, Թբիլիսիի միջազգային բաբտիստական եկեղեցիների, Վրաստանի Ավետարանչական քրիստոնյա բաբտիստական եկեղեցիների միության, Ավետարանչական հավատի քրիստոնեական միացյալ (50-ական) եկեղեցու ներկայացուցիչները:

### ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

- Ողջունում եւ դրական ենք գնահատում Վրաստանի Կրոնի հարցերով պետական գործակալության 2016-2017թթ. գործունեությունը եւ համարում, որ 2014թ. Վրաստանի կառավարության կողմից այս գործակալության հիմնումը ճիշտ որոշում էր: Գնահատելի են գործակալության անցնող 4 տարիների աշխատանքները, հուսադրիչ՝ գործակալության ղեկավար պարոն Զազա Վաշաղմաձեի գլխավորությամբ ձեւավորված աշխատակազմի գործունեությունը, որն ուղղված է տարիներով կուտակված հարցերի լուծմանը:

Սակայն, ցանկալի կլիներ, որ գործակալությանը տրվեին ավելի լայն իրավունքներ եւ հնարավորություններ, որպեսզի բազմազգ եւ բազմակրոն Վրաստանում ձեւավորվի համապատասխան քաղաքականություն՝ կրոնական համայնքների զարգացման եւ խաղաղ համակեցության համար: Այս առումով կարեւոր է կրոնական համայնքների նկատմամբ հավասար եւ արդարացի մոտեցումը, որպեսզի կրոնական համայնքները ոչ թե վիճեն իրենց պատմական ժառանգության հետ կապված հարցերով, այլ՝ միասնական ուժերով լծվեն հարազատ երկրում հոգեւոր-բարոյական մթնոլորտի առողջացման, մեր քաղաքացիների բարոյական նկարագրի կատարելագործման սուրբ գործին:




Անտարակույս, Գործակալության ծրագրերը կյանքի կարող են կոչվել Վրաստանում գործող օրենքի սահմաններում, ուստի կառաջարկեինք Վրաստանի խորհրդարանին՝ ընդունել կրոնի մասին օրենք, որը նկատի կունենա կրոնական կազմակերպությունների նկատմամբ հավասար մոտեցումը, կրոնական կազմակերպություններին կտա հարկային հավասար արտոնություններ եւ պարտավորություններ: Որպեսզի վրաց օրինյալ եւ բազմաչարչար հողում, մարդկանց մեջ ագրեսիայի, հանցագործության, միմյանց նկատմամբ թշնամանքի փոխարեն, թեւածի հանդուրժողականությունը, ներողամտությունը, սերն ու բարությունը:

Այլապես այսքան կրոնական սրբավայրերի, հոգեւոր սպասավորների առկայության պայմաններում էլ հասարակության մեջ անհնար կլինի արմատախիլ անել անհանդուրժողականությունն ու ագրեսիան: Ավելին, երկրում շատանում են խաղատները, գիշերային ակումբները, շատ անգամ հեռուստաընկերությունները տարածում են հաղորդումներ, ցուցադրում ֆիլմեր, որոնք չեն համապատասխանում մեր երկրի ավանդույթներին եւ մշակույթին: Կրոնի հարցերով պետական գործակալությունը պետք է նախաձեռնի նաեւ՝ կրոնական համայնքների առաջնորդների, հոգեւոր սպասավորների եւ հավատացյալների հետ միասին նշված բացասական դրսեւորումների դեմ պայքարելու աշխատանքներ եւս:

Վրաց ժողովուրդն ու հասարակությունը պատմության ընթացքում եղել են մարդասեր, արդարադատ, ազատատենչ, եւ մենք հավատում ենք, որ այսօր էլ Վրաստանում շարունակում է ապրել նույն ոգին, որը հնարավորություն կտա կրոնական եւ ազգային համայնքներին՝ Վրաստանի լիարժեք քաղաքացիներ զգալու, հարազատ երկրի նկատմամբ ամբողջական պարտավորություններ ստանձնելու համար:

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՎԻԶԱ

## ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է ԱՆԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻ ՀԱՐՑՈՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

...նը ծրագրում է իրականացնել մի շարք օրենսդրական նախաձեռնություններ՝ ուղղված ապօրինի միգրացիայի սահմանափակմանը: Նման իրավական միջոցներից մեկը հանդիսանում է ազգանունը փոխելու ընթացակարգի խստացումը:

Այդ թեմային, մասնավորապես, անդրադարձավ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, մարտի 6-ին, կառավարության հերթական նիստում: Նրա խոսքով, Վրաստանի քաղաքացիները տարբեր ազգանուններով մեկնում են Եվրամիության երկրներ, որտեղ, ցավոք, իրավախախտում են թույլ տալիս, հետեւաբար, կոնկրետ քայլեր պետք է ձեռնարկվեն այդ գործընթացի խստացման համար: Ինչպես նշեց վարչապետը, արդարադատության նախարարության կողմից ներկայացված օրինանախագիծը, մասնավորապես, նախատեսում է ազգանունը փոխելու ընթացակարգի նշանակալի խստացում:

Նշենք, որ մարդկանց ապաստարանով ապահովելու հարցում, աջակցության եվրոպական բյուրոյի տվյալներով, Եվրոպայում Վրաստանից ապաստարան հայցողների թիվը, 2017 թվականին, նախորդ տարիների համեմատությամբ, ավելացել է 35 տոկոսով: Այդ կապակցությամբ, Վրաստանի իշխանությունները եվրոպական գործընկերներին խոստացել են ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ նման զարգացումը կանխելու համար:



### «ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾԸ ՍՏՈՐԱԳՐՎԵՑ

*Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի նախագահը հրաժարվեց ստորագրել խորհրդարանի կողմից նախագահական վետոն՝ 83 կողմ եւ 13 դեմ ձայներով հաղթահարած խորհրդարանի կողմից ընդունած «Հեռարձակման մասին» օրինանախագծի փոփոխությունները: Խորհրդարանը, որը դեռեւս փետրվարի 21-ին հրաժարվեց նկատի ունենալ նախագահի դիտողությունները վերոնշյալ օրինանախագծի կապակցությամբ, կրկին հաստատել էր իր որոշումը:*

*Վրաստանում գործող օրենսդրության համաձայն, երկրի նախագահի կողմից երկրորդ անգամ օրինանախագիծը ստորագրությամբ հաստատելուց հրաժարման դեպքում, փոփոխությունները ուժի մեջ են մտնում խորհրդարանի նախագահի ստորագրումից հետո: Մարտի 6-ին խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն վերոնշյալ օրինանախագիծը ստորագրեց:*

### ԿԱՆՑԿԱՑՎԻ ՖԵՐՄԵՐՆԵՐԻ ԴԱՍԸՆԹԱՑ

*Վրաստանի ֆերմերների ասոցիացիան մշակել է ֆերմերների ուսուցման եւ վերապատրաստման նախագծեր, որոնք կֆինանսավորվեն Վրաստանի նախագահի պահուստային հիմնադրամից: Համապատասխան հուշագիրը ստորագրել են Վրաստանի նախագահի աշխատակազմի ղեկավար Գիորգի Աբաշիշվիլին եւ Վրաստանի ֆերմերների ասոցիացիայի նախագահ Նինո Զամբախիձեն: Նախագծի նպատակն է՝ բարձրացնել ֆերմերների արհեստավարժական հնարավորությունները, որակավորումն ու բարելավել տեխնոլոգիան:*

### ԿԳՈՐԾԻ ՎՐԱՑԱԿԱՆ ՆՈՐ ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

*MyWay Airlines վրացական նոր ավիաընկերությունը մարտի վերջից կամ ապրիլի սկզբից կսկսի Թբիլիսիից չարտերային չվերթեր իրականացնել Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելառուսի, Իրանի եւ Իսրայելի ուղղությամբ:*

*MyWay Airlines-ը հիմնվել է Hualing Group չինական ընկերության կողմից: Անցյալ տարվա նոյեմբերին Չինաստանից երկիր է բերվել «Բոինգ-777» երկու ինքնաթիռ՝ ավելի քան 43,4 մլրդ դոլար արժողությամբ: Երրորդն սպասվում է հուլիսի սկզբին, իսկ չորրորդը՝ տարեվերջին՝ դեկտեմբերին:*

*Ներկայում Վրաստանում գործում է Georgian Airways ազգային ավիափոխադրողը, որն սկզբնապես կոչվում էր Airzena:*

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆ ԸՆԴՈՒՆԵՑ «ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԸ

***Մարտի 8-ին, Վրաստանի խորհրդարանը լիագումար նիստում, երրորդ ընթերցմամբ, հավանություն տվեց «Զինված ուժերի պահեստի եւ պահեստային ծառայության մասին», ինչպես նաեւ «Աշխատանքի անվտանգության մասին» օրենքներին:***

Պահեստային ծառայության մասին օրինանախագիծը նախատեսում է ընթացիկ տարվա հունիսի 1-ից երկու տեսակի պահեստային ծառայության՝ ակտիվ եւ մոբիլիզացիոն պահեստի ստեղծում: Ակտիվ պահեստը, իր հերթին, կազմված կլինի զինված ուժերի պահեստից, տարածքային պահուստից եւ մասնագետների պահեստից: Զինված ուժերի պահեստ կզորակոչվեն մինչեւ 50 տարեկան Վրաստանի քաղաքացիները, տարածքային պահեստ՝ մինչեւ 55 տարեկան, իսկ մասնագետների պահեստ՝ մինչեւ 65 տարեկան քաղաքացիները: Ինչ վերաբերում է մոբիլիզացիոն պահեստին, ապա՝ կզորակոչվեն մինչեւ 60 տարեկանները:

Օրինանախագիծը նախատեսում է նաեւ ակտիվ պահեստ ներառված անձանց աշխատավարձի վճարման կարգը: Մասնավորապես, նախագծի համաձայն, պահեստայինը ամսական կստանա, ըստ կոչման, աշխատավարձի 20 տոկոսը, իսկ զինծառայության ժամանակահատվածում՝ ողջ աշխատավարձը:

Ինչ վերաբերում է աշխատանքի անվտանգության մասին օրինանախագծին, ապա աշխատանքային օրենսդրության խստացման անհրաժեշտությունը ծագեց արտադրական եւ շինարարական ոլորտներում մի շարք ողբերգական միջադեպերից հետո: Վրաստանի ներքին գործերի նախարարության տվյալներով, 2007-2016 թվականներին Վրաստանում արտադրական վնասվածքներից զոհվել է 416, մարմնական տարբեր աստիճանի վնասվածք է ստացել 716 մարդ:

## ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԿՆՈՋ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԽՍՏԱՑՎՈՒՄ ԵՆ

***Ընտանեկան բռնության եւ կնոջ նկատմամբ բռնության կանխման նպատակով, չեղարկվում է զսպման օրդենի հանձնումը, ինչպես նաեւ՝ հրազենի մատչելիության սահմանափակումը:***

Ինչպես հայտարարեց Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, արդարադատության նախարարությունն արդեն մշակել է համապատասխան փոփոխությունները: «Ցավոք, մեր երկրում այդ ուղղությամբ վիճակագրությունը բավական անմխիթար է: Այդ մասին շատ ենք խոսել: Այդ ուղղությամբ քայլերից մեկը զսպման օրդենի հանձնման վերացումն է, ինչպես նաեւ՝ հրազենի մատչելիության սահմանափակման չեղարկումը: Մինչ այդ, այդ քայլը համարվում էր խտրական, եւ մենք կոնկրետացնում ենք այն դեպքերը, երբ պարտադիր կդառնա օրդենի հանձնումը, ինչպես նաեւ հրազենի մատչելիությունը»,- հայտարարեց վարչապետը՝ հավելելով, որ, վերջին հաշվով, այդ քայլերը բավարար համարել չի կարելի, եւ կառավարությունը ծրագրում է նաեւ այլ միջոցներ:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ

## ՄԻՆՉԵՎ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ը ՏՐՎԱԾ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՍՊԱՌՎՈՒՄ Է 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-ԻՆ




***Մինչեւ 2006 թվականի ապրիլի 1-ը տրված վարորդական իրավունքների իրավասությունը սպառվում է 2018 թվականի ապրիլի 1-ին:***

Վարորդական վկայականները հնարավոր է փոխել սպասարկման գործակալության ցանկացած մասնաճյուղում: Վարորդական վկայականի նորացման համար, քաղաքացին ներկայացնելու է տեղեկանք առողջության մասին, անձը հաստատող վկայականը եւ իր վարորդական վկայականը:

Վարորդական վկայականի նորացման արժեքը կազմում է 15 լարի, կորցրած վկայականի վերականգնման արժեքը՝ 35 լարի:

Մինչեւ 2006 թվականը ստացած եւ հետո նորացված վարորդական վկայականները պահպանում են՝ իրավաբանական ուժը:

Այն դեպքում, եթե քաղաքացին, մինչեւ 2018 թվականի ապրիլի 1-ը չի փոխում վարորդական վկայականը, ապա, փաստաթուղթը ավտոմատորեն համարվում է չեղարկված: Քաղաքացին տրանսպորտային միջոցը իրավասու կլինի վարել միայն նոր վկայականի ստացումից հետո:

Հատկանշական է, որ, 2018 թվականի հունվարի 1-ից հետո, վարորդական վկայականը փոխել ցանկացողները նույնպես չեն հանձնի տեսական եւ գործնական քննությունը:

ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## «TBC-ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ» ՍԿՍՈՒՄ Է ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒՄԸ

***«TBC-ի ապահովագրությունը» մարտի 5-ից սկսել է նոր ակցիա: Ինչպես տեղեկացրին TBC-ի բանկից, սպառողները «Թբիլիսիի ապահովագրությունից» կարող են օգտվել մեքենաների ապահովագրման լավագույն պայմաններից եւ ստանալ բացառիկ նվերներ՝ 50 լիտր վառելանյութ «Վիսոլիի» պրեմիում տեսակից եւ 100 լիտրի վաուչեր՝ TAXIFY-ից:***

«Նաեւ ողջ տարվա ընթացքում ապահովագրվածը կօգտվի բացառիկ արտոնություններից՝ «Վիսոլիի» վառելանյութի 15 թեթրիի զեղչից, գործընկերների լվացարաններում մեքենայի լվացման 50 տոկոսանոց զեղչից: Ծրագրված է երկու տեսակի նվեր՝ կախված մեքենայի գնից՝ 17500 լարիից ավելի կամ պակաս: Ակցիային մասնակցելու եւ նվերները ստանալու համար, սպառողները պետք է ձեռք բերեն ապահովագրման ողջ փաթեթը, որը նախատեսում է մեքենայի ապահովագրությունը, ավտոպատասխանատվության ապահովագրությունը, վարորդի եւ ուղեւորների դժբախտ պատահարից ապահովագրությունը»,- ասված է բանկի հաղորդագրության մեջ:

Բանկի տեղեկատվությամբ, ավտոապահովագրությունը կարող է ստանալ Վրաստանի ողջ մասշտաբով «TBC ապահովագրություն» մասնաճյուղերում, TBC բանկի մասնաճյուղերում եւ online.tbcinsurance.ge կայքէջում:

«Սահմանված է նվերներից օգտվելու դյուրին կարգ: Taxify նվերի կոդի օգտագործումը ապահովագրվածը կարող է իրականացնել Taxify բջջային ապլիկացիայի միջոցով, իսկ նվեր վառելանյութից կարելի է օգտվել «Վիսոլիի» բենզինալցման կայաններում Վրաստանի ողջ մասշտաբով»,- նշված է TBC բանկի հայտարարության մեջ:



ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

# ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵ. «ՄԵՐ ՆՊԱՏԱԿԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎԱՑՈՒՄՆ Է»

*Վրաստանի ֆինանսների նախարարությունը, փոքր գործարարության ներկայացուցիչներին հարկային նոր նախաձեռնությունների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն փոխանցելու նպատակով, սկսել է լայնածավալ քարոզարշավ:*

Ինչպես տեղեկացրին ֆինանսների նախարարությունից, մարտի 5-ին Բաթումիում, իսկ մարտի 6-ին՝ Քութայիսիում ֆինանսների նախարար Մամուկա Բախտաձեն, փոքր եւ միջին գործարարության ներկայացուցիչների հետ հանդիպմանը, ներկայացրեց փոքր ձեռներեցության համար հարկային նոր նախաձեռնությունների մանրամասները:

Հարկային նոր նախաձեռնությունները նախատեսված են Վրաստանում գործող փոքր ձեռներեցների խրախուսման համար եւ նախատեսում են արտոնյալ հարկային պայմանակարգի ներդնում:

Վերոնշյալ հանդիպումներում Մամուկա Բախտաձեն, որպես նոր նախաձեռնության հիմնավորում, ներկայացրեց գործադիր իշխանության այն երկու հիմնական նպատակները, որոնք դրվել են օրենսդրական փոփոխությունների հիմքում: Դրանցից առաջինը երկրի էկոնոմիկայում փոքր եւ միջին գործարարության բաժնի ավելացումն է եւ երկրորդը՝ տարածաշրջաններում տնտեսական բարձր արտիվության ապահովումը:

Ինչպես հայտարարեց ֆինանսների նախարարը, գերատեսչությունը գործում է այն սկզբունքով, որ հարկային յուրաքանչյուր որոշում պետք է ընդունվի ձեռներեցների հետ համապատասխան խորհրդատվություններից հետո: «Այսօրվա մեր հանդիպման նպատակն այն է, որ մասշտաբային բարեփոխումները, որոնք ծրագրել է Վրաստանի կառավարությունը, նախօրոք փորձարկվեն, ներկայացվեն մեր ձեռներեցներին, որպեսզի նրանց կողմից տրվեն կոնկրետ հանձնարարականներ ու առաջարկություններ»,- հայտարարեց Բախտաձեն՝ հավելելով, որ կառավարության նպատակն է՝ հասնել տնտեսական այնպիսի աճի, որը կանդրադառնա յուրաքանչյուր ընտանիքի բարեկեցության վրա:

«Մենք սկսում ենք ամենածավալուն բարեփոխումը: Օրենսդրական փոփոխությունների այս փաթեթը կառնչվի ավելի քան՝ 120 հազար ձեռներեցների: Խոսքը հարկային սակագնի հնգապատիկ նվազեցման մասին է՝ 5-ից մինչեւ մեկ տոկոս, եւ ընդգրկում է բոլոր այն ընկերությունները, որոնց դրամաշրջանառությունը, նախկինում սահմանված 100 հազարի փոխարեն, հասնում է 500 հազար լարիի: Դա լայնածավալ փոփոխություն է, կարեւորագույն հարկային ազատականացում: Այն նշանակալից է նրանով, որ սկզբնական փուլում, երբ իրականացրինք շահութահարկի վերացում, առնչվեց հիմնականում խոշոր եւ միջին ձեռներեցությանը, իսկ ներկայիս փոփոխություններն անմիջականորեն կապված են սոցիալական իրավիճակի հետ: Ձեռներեցության խրախուսումը կարեւոր նշանակություն ունի, առանձնապես այն տեսանկյունից, որ մեր բնակչության լայն զանգվածներն անմիջականորեն զգան դրա ազդեցությունը»,- հայտարարեց Մամուկա Բախտաձեն եւ հավելեց, որ ներդրվող հարկային փոփոխությունները կարճ ժամանակում լայն հնարավորություններ կբացեն բիզնես գործարարության զարգացման համար: «Հարկ է նշել, որ այս փոփոխություններն ուղեկցվում են վարչական արտոնությունների այլ տեսակներով եւ դյուրացնելու են հարկային ինստիտուտների, եկամուտների ծառայությունների հետ ձեռներեցների հարաբերությունները»,- ընդգծեց ֆինանսների նախարարը:



Մամուկա Բախտաձեի խոսքով, փոքր ձեռներեցների համար ներդրվող հարկային մի շարք արտոնություններին զուգընթաց, կառավարությունը մտադիր է վերացնել փոքր ձեռներեցության համար կանխավճարային հարկային վճարումների պրակտիկան:

Փոքր ձեռներեցները պարտադրված կլինեն օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ օգտագործել միայն գանձարկղային վերստուգիչ սարքը եւ ապրանքանիշը: Կանխավճարային հարկային վճարումների վերացման դեպքում էլ՝ հարկային հայտագրերի ներկայացումը կլինի ամսական պարտադիր:

Միաժամանակ, Մամուկա Բախտաձեն նշեց, որ նախաձեռնությունների նոր փաթեթը նախատեսում է նաեւ հաշվապահական հաշվետվության տեսանկյունից փոքր ձեռներեցության համար հարկային վարչարարության վերացում: Նախարարի հավաստմամբ, մոտ ժամանակներս ակտիվ հանդիպումներ կսկսեն փոքր ձեռներեցության ներկայացուցիչների հետ, եւ այդ հանդիպումներում կքննարկվեն փոքր ձեռներեցության աջակցությանն ուղղված կառավարության նախաձեռնությունները:

***ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ***

ԻՐԱՎԱԿԱՆ

## ՆԵՐԴՐՎՈՒՄ Է ՄԱՐԴԱՇԱՏ ՎԱՅՐԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

*Ընթացիկ տարվա մարտի 1-ից Վրաստանում ներդրվում է մարդաշատ վայրերի պարտադիր ապահովագրությունը:*



Համապատասխան փոփոխությունը կատարվել է «Քաղաքացիական անվտանգության մասին» օրենքում: Համապատասխան որոշումը Վրաստանի կառավարությունն ընդունել էր անցյալ տարվա դեկտեմբերի 28-ին, եւ այն ուժի մեջ մտավ ընթացիկ տարվա մարտի 1-ից: Պարտադիր ապահովագրությունը տարածվում է առեւտրական կենտրոնների, շուկաների, տոնավաճառների, հյուրանոցների, հանգստյան տների, ինչպես նաեւ՝ ավտոլցակայանների սեփականատերերի վրա:

Կառավարության որոշմամբ, սահմանված են ապահովագրական լիմիտի եւ ապահովագրական փոխհատուցման չափերը՝ կյանքին, առողջությանը եւ գույքին հասցրած վնասի համար:

Կյանքին եւ առողջությանը վնասելու համար տարեկան ապահովագրական լիմիտը, առեւտրական կենտրոնների եւ ավտոլցակայանների սեփականատերերի համար, կազմում է 300 հազար լարի, իսկ հյուրանոցի սեփականատերերի համար՝ 600 հազար լարի: Ընդ որում, ապահովագրական կոնկրետ մի դեպքի ժամանակ՝ կոնկրետ մի անձնավորության կյանքի հասցրած վնասի համար ապահովագրական փոխհատուցման լիմիտը կազմում է 30 հազար լարի, իսկ կոնկրետ մի քաղաքացու առողջությանը հասցրած վնասի համար՝ 15 հազար լարի: Ձեռներեցների, գույքի վնասի համար ապահովագրական փոխհատուցումը սահմանվել է 15 հազար լարիի չափով, իսկ, ընդհանուր առմամբ, փոխհատուցման ապահովագրության գումարը տարվա ընթացքում չպետք է գերազանցի 15 միլիոն լարին:

2018 թվականի հունվարի 1-ից առեւտրական կենտրոնների բոլոր սեփականատերերը պարտավոր են ապահովագրել անձնական քաղաքացիական պատասխանատվությունը, իսկ դա նշանակում է, որ ապահովագրական գումարը արտացոլվելու է շինության վարձակալության պայմանագրերում, որը սեփականատերերը ստորագրելու են մասնավոր առետրական-ձեռներեցների հետ:



## ՀԱՅՀՈՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ ՏՈՒԳԱՆՔ՝ 500-ԻՑ՝ 1000 ԼԱՐԻ

*Վրաստանում խստացվում է մանր խուլիգանության համար դրամական տուգանքը: Վրաստանի ներքին գործերի նախարարության նախագահությամբ՝ համապատասխան փոփոխությունը կատարվել է «Վարչական իրավախախտումների մասին» օրենսգրքում:*

Փոփոխությունների համաձայն, մանր խուլիգանության համար տուգանքը կկազմի 500-ից մինչեւ 1000 լարի, նախկինում՝ 100-ի դիմաց: Նման գումար իրավախախտը ստիպված կլինի վճարել վիրավորական ձեւով կամ հայհոյանքով՝ որեւէ քաղաքացու հասցեին արտահայտվելու համար: Այն դեպքում, եթե իրավապահները գտնեն, որ կոնկրետ պարագայում նման պատիժը բավարար չէ, ապա իրավախախտին սպառնում է մինչեւ 15 օրվա վարչական կալանք:

Միաժամանակ, նման իրավախախտում թույլ տված անձը զրկվում է 3 տարով հրազեն կրելու իրավունքից:

ՆՈՐՈՒՅԹ

MAGTI

ՄԱԳԹԻԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻՆ

ՀԱՄԱՑԱՆՑ, ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՆՑ ԼԻՄԻՏԻ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲՋՋԱՅԻՆՈՎ, ԱՄՍԱԿԱՆ՝ 29 ԼԱՐԻՈՎ

**Օպտիկական – մանրաթելային համացանց**
20 մգ/վրկ փաթեթ

**IP հեռուստատեսություն**
Վերափաթեթավորման գործառույթով – 98 ալիք

**Բջջային հեռախոս**
Սերվիս «Մերոնք», առանց լիմիտի խոսակցություն Մագթիկոմի բջջային ցանցով ընտանիքի 4 անդամների միջև

Նվեր

- WiFi սարք տանը՝ համացանցի ազդանշանի տարածման համար
- Հեռուստատեսության 1 լրացուցիչ փաթեթ

Ծրագրերի մուտքագրումը՝ անվճար

Առաջարկությունը ուժի մեջ է միացումից հետո 2 տարվա ընթացքում

Կապվեք՝ 11 00 11 - բջջային ցանցով,
032 217 00 00 – ցանկացած ցանցով
Մագթիկոմի ցանցով հեռախոսազանգը անվճար է:

www.magticom.ge